30.12.2020թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 438498 /05-Վ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս ուսումնասիրելով 30.12.2020 թվականի թիվ 35874 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 30.06.2020թ. թիվ 4124919 ակտի ԱՁ Ռոման Բագրատյանը (ՀՎՀՀ՝ 88922799, ՀՀ ք. Երևան Զ. Քանաքեռցու 127/1 9)՝ հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացվող դրամական միջոցների հաշվառումը վարել է այնպիսի խախտումով, որը կարող է առաջացնել հարկի նվազեցում:

Վարչական վարույթի շրջանակներում Ռոման Բագրատյանին փոստային ծառայության միջոցով հասցեագրվել է ծանուցագիր՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը և գործի քննությանը մասնակցելու վերաբերյալ: Նկատի ունենալով, որ ծանուցագրի ստացման փաստը հավաստող ապացույց առկա չի եղել, ուստի ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 30.10.2020 թվականին կայացվել է վարչական վարույթը կասեցնելու մասին որոշում՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի:

Կողմին հայտնաբերելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առարկություն կամ բացատրություն առկա չէ:

Այն փաստը, որ Ռոման Բագրատյանի կողմից իրավախախտումը վերջին մեկ տարվա ընթացքում կատարվել է առաջին անգամ, սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 33, 244^2 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ռոման Բագրատյանի վերաբերյալ հարուցված թիվ 35874 վարչական վարույթը վերսկսել:
2. Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169^1 հոդվածի 1-ին մասի Ռոման Բագրատյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 15.000 (տասնհինգ հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝

Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին. **900005240487**՝ տուգանքի վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:

Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստացա որոշման պատճենը _____